

**Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի (ANCA)
նախագահ Քեն Խաչիկյանի ելույթը
2014թ. Հայաստան-Միջուրք 5-րդ համաժողովում
2014թ. սեպտեմբերի 19, Երևան**



Յոթ ամիս հետո այստեղ՝ Երևանում և ամբողջ աշխարհում մենք նշելու ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը:

Ճիշտ կլինի, որ մի պահ դադար տանք և անդրադառնանք մեր ցավալի անցյալին: Տեղին կլինի, որ մեր ազգի որդիներն ու դուստրերը արժանին մատուցեն մեր նահատակներին, աղոթեն նրանց հոգիների համար:

Բայց այսօր մեր աչքերն ուղղված են հորիզոնին:

Մեր նախնիներին լավագույն հարգանքի տուրքը մեր ծառայությամբ նրանց զոհաբերությունը հարգելն է, նրանց նվիրվածությանը հավասար նվիրվածությամբ:

Հայերը միշտ այդպես են վարվել: Հնագույն ժամանակներից մինչև մեր ժամանակները: Ուրարտուից մինչև Ավարայր, Սարդարապատից մինչև Արցախ:

Մենք մշտապես իմացել ենք, և այսօր էլ հասկանում ենք մեր գոյատևման գինը.

- Ծառայություն ... անխոնջ և անձայն
- Զոհաբերություն ... անանձնական և մշտական
- Միասնականություն ... անսահման և անկոտրում

Մենք բոլորս գիտենք մեր սրտերում գրված պարզ ճշմարտությունը. Հայոց պատմության ամենակարևոր էջերը դեռևս գրված չեն դեռևս չձևված սերունդների կողմից:

Եվ այսօր մենք կանգնած ենք մեծ շրջադարձի առջև: Մեր անցյալի ճամփաբաժանին: Հայ ազգի նոր լուսաբացի առջև:

Մեր սերնդի պարտքն է և օրինանքը դարձնել այս դարը, մեր համարյա իսպառ բնաջնջումից հետո երկրորդ, հայ ազգի համար ճշմարտության, արդարության և անվտանգության դար:

Ճշմարտություն ոչ պարզապես հանուն ճշմարտության, այլ ճշմարտություն հանուն արդարության:

Արդարություն ոչ միայն մեռյալների համար, բայց նախևառաջ՝ ապրողների: Արդարություն, որը կապահովի մեր անվտանգությունը:

Մեր գոյատևումը: Մեր ապագան: Սա է մեր Հյուսիսային աստղը:

Հայ ազգի գոյատևում և երկարաժամկետ կենսունակություն:

Հայ Դատի միջազգային շարժումը, աշխարհի հիմնական մայրաքաղաքների Հայ դատի գրասենյակների գլխավորությամբ, հայ ազգի լիակատր պաշտպանությունն է:

Մենք, եթե պարզ ձևակերպելու լինենք, հայ ազգի գոյատևման էական տարրերից մեկն ենք: Այդ սուրբ պարտականության համեստ գնահատականի համար ենք մենք ծառայում որպես հայ ազգի դեսպաններ:

Այդ ոգով ենք մենք պայքարում՝ որպես հայ ազգի երկրորդ բանակ: Մենք որպես պաշտպան կանգնած ենք հայության ազատության սահմաններին և մեծ կոիվ ենք տալիս աշխարհի մայրաքաղաքներում հանուն մեր հայրենիքի և ժառանգության:

Մենք առաջ ենք տանում հայերի կենսական շահերը, բոլորիս համար կարևոր համընդհանուր խնդիրները, որոնք պետք է որոշեն հայոց հայրենիքի ապագան:

- **Արդարություն Ցեղասպանության համար**
 - Հասնել միջազգային ճանաչման
 - Հատուցումներ՝ ազգին, քրիստոնեկան եկեղեցիների վերադարձ և մեր հայրենիքի արևմտյան հատվածի վերականգնում
 - Մերժել Թուրքիայի ձևական ջանքերը և պահանջել – իսկ մենք պարտավոր ենք դա անել – հայ ազգին հասանելիք լիակատար ճշմարտությունը, արդարությունը և անվտանգությունը
- **Հզոր և կենսունակ Հայաստան**
 - Աջակցել բարեփոխիչներին
 - Փոխել տապալված քաղաքական ուղղությունները
 - Պայքարել կոռուպցիայի դեմ
 - Զարգացնել ժողովրդավարությունը
 - Զարգացնել հայ-ամերիկյան հարաբերությունները
 - Ստեղծել աշխատատեղեր, հույս և հնարավորություն
- **Անվտանգություն անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար**
 - Դիմակայել Ադրբեջանի ագրեսիային
 - Հակահարված տալ Արցախի դեմ հարձակումներին
 - Ապահովել միջազգային աջակցություն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքին
- **Անվտանգություն մեր մերձավորարևելյան հայ համայնքներին**
 - Աջակցել հակամարտությունների խաղաղ կարգավորմանը
 - Ապահովել միջազգային օժանդակություն Սիրիայի, Իրաքի և տարածաշրջանի այլ վտանգված համայնքներին
- **Ինքնաբավ և մշակութային առումով կենսունակ Զավախք**
 - Շահերի պաշտպանություն և տնտեսական զարգացմանն ու մշակութային ինքնությանն օժանդակող ծրագրեր
 - Վրաստանի Զավախքի շրջանի ինքնակառավարում

Այս բոլոր կարևորագույն ոլորտներում հայության շահերին ուղղված մեր միջազգային ջանքերը սերտորեն կապված են Հայաստանի քաղաքացիների կողմից և նրանց համար կատարվող առաջադիմության հետ:

Ներքին տնտեսական, ռազմական, քաղաքական և մշակութային առումներով ավելի հզոր Հայաստանն ի վիճակի կլինի ավելի լավ պաշտպանել իր շահերը միջազգային ասպարեզում:

Եվ ավելի անվտանգ Հայաստանը – ավելի լավ տարածաշրջանային և միջազգային կապերով – ավելի լայն հնարավորություններ կունեա ներքին առաջադիմության համար:

Եկեք պարզ խոսենք: Պայքարը հանուն ժողովրդավարության և ընդդեմ կոռուպցիայի՝ հայ ազգի ազգային անվտանգության առաջնահերթություններից է: Հանուն Հայաստանի պաշտպանության

պայքարողները պայքարում են հանուն Հայաստանի բարելավման, ճիշտ այդպես էլ՝ հանուն Հայաստանի բարելավման պայքարողները պայքարում են հանուն Հայաստանի պաշտպանության:

Մեր առջև հզոր հակառակորդներ են և մեզ անհրաժեշտ է այդ միասնականության ոգին: Որովհետև եթե միասնական լինենք, միասին կանգնենք, համաձայնության գանք, վստահություն ստեղծենք և աշխատենք միասնաբար, ամեն ինչ հնարավոր կլինի:

Մենք իսկապես ավելի հզոր ենք, քան մեր մասնիկների գումարը:

Առանց միասնականության, միայնակ գործելով, մեր Հայրենիքը և Սփյուռքը խոցելի են «բաժանիր ու տիրիր» քաղաքականության առջև:

Այդ մարտավարությունը հին է ինչպես արդեն փլուզված կայսրությունները, որոնք փորձում էին մեզ ոչնչացնել, և նոր, ինչպես մեր ազգին պարտադրվող Արձանագրությունների խեղկատակությունը: Մենք այդ բոլորը տեսել ենք մեր դարերի պատմության ընթացքում:

Բայց այսօր մենք ավելին գիտենք: Մենք թույլ չենք տա այլոց մեզ կեղծ ընտրություններ պարտադրել: Մենք պետք է միասնաբար դիմակայենք մեզ իրարից բաժանելու անվերջ ջանքերին:

Բայց նաև շատ կարևոր է, որ մենք կարողանանք փոխվել: Պահպանելով ժամանակի փորձությանը դիմացած մեր արժեքները, այսօր մենք վերահայտնագործում ենք մեզ և մեր պայքարը նոր ժամանակաշրջանում:

Մենք հետ չենք մնում, թարմացնում ենք մեր ենթակառուցվածքը, որպեսզի համապատասխանենք արագորեն փոխվող աշխարհաքաղաքական կառուցվածքում ընթացող նոր սերնդի քաղաքական պատերազմի պահանջներին:

Առաջիկա ամիսներին դուք կտեսնեք՝

- Հայ Դատի ուշադրության նոր կենտրոնը օրենքի և արդարության վրա, որը միավորում է մեր համայնքի ամենատաղանդավոր իրավաբաններին ու ռեսուրսները՝ պաշտպանելու մեր իրավունքները և առաջ մղելու մեր հարցը.
- Հայ Դատի նոր՝ Մայրաքաղաքի դարպաս ծրագրի տուն (Capital Gateway House) Վաշինգտոնի սրտում, որը լինելու է երիտասարդ ամերիկահայ առաջնորդների նոր սերնդի կենտրոնը.
- Հայ Դատի տեղեկատվական տեխնոլոգիայի նոր ալիքը՝ հիմնված ամենավերջին հանրային մեդիայի, տեղեկատվական և տեսակապերի վրա:

Մենք հիմնվում ենք ավելի քան մեկդարյա ծառայությունից եկող ժառանգության վրա: Մենք կարող ենք, և պետք է, հպարտանանք նրանով, թե ինչ հեռուն ենք հասել:

Մենք ստեղծել ենք այն քաղաքական հզորությունը, որի կարիքը մեր Հայրենիքն ունի և վաստակել ենք արժանի հարգանք: Բայց մենք չենք հանգստանալու:

Մենք շարունակելու ենք պայքարել:

Անվախորեն և հավատարմորեն առաջ մղելով մեր սերնդի գործը՝ ծառայելու ենք մեր սուրբ հայրենիքին և ժառանգությանը: